Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ. N 248-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԱԼԵՔ ԱՎԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված քաղաքացի Լիդա Հակոբյանի՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից տրված անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանագրի հետ կապված նոտարական գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ դիմումում բարձրացված հարցերը և դրա հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներով ներկայացված տեղեկանքը, ինչպես նաև աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյանի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ